

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ի Ր Օ Շ Ը

Մեր վերածնութեան այս արշալուսին շատ խօսուեցաւ հայ դրօշին վրայ, և շատ ալ ձեեր հնարուեցան, ոմանք մինչև իսկ պատմական կարծուած, որոց հետ սակայն պատմութիւնը կապ չունի բնաւ: Ինչպէս բուսան՝ նիւթական հետևողութեամբ օտարաց՝ նաև զանազան համախմբութիւնք երբեակ գոյնեբու, որոց լեզուն մենք Հայերս չենք հասկնար, և կը դժուարինք անգամ գատել զանոնք օտարներէ: Մտունդ են բոլորն անհատական ախորժակաց, որոնք ոչ թիւ՝ ոչ սահման կրնան ունենալ, և ոչ որոշ ու հեղինակաւոր հիմ մը կազմել նոր հայ դրօշին: Մեր Ազգն և ազատութիւնը նոր չեն ստեղծուիր, այլ կը վերականգնեն: Պատշաճ է՝ որ միասին վերականգնին իրենց հարազատ նշանակներն ալ, մեր հարց զործածած ու սրբազործած ձեերն իսկ, փոխանակ օտարաց փետուրներով զարգարուելու: Վասն զի, կրկնենք Բանաստեղծին հետ, «Մտան արմատով ծառ, տունն հիմամբն է տուն»:

Հաւատարիմ այս սկզբան, վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան տպարանն ի լոյս կ'ընծայէ ուսումնասիրութիւն մը՝ սոյն վերնագրով, Հայ դրօշերը պատմութեան մէջ, աշխատասիրութեամբ Հ. Վ. Հացունոյ, որ կը խօսի հայկական հին դրօշուց մասին ընդարձակ և ցարդ անծանօթ ֆիւստի մնացած տեղեկութեամբ ու պատկերներով: Այդ աշխատութեան ցոյց տուած պատմական տարրերէն ծնած է ներկայ դրօշը՝ զոր հաւանութեամբ մասնաժողովոյ մը Հնախօս Մխիթարեանը կ'առաջարկէ մեր Ազգին, և որոյ հետ կը զուգուի սոյն համառօտ բացատրութիւնը:

Մեր հնութեան մէջ կային արքունի և իշխանական դրօշներ՝ իրենց տոհմային յատուկ նշաններով, և ազգային կամ հասարակաց դրօշը՝ խաչի նշանով: Ասոնցմէ բաղադրուած է ներկայս:

Իւր ծիրանի պատտար, հին ծիրանին՝ որ սովորաբար մանիշակախառն կարմրին կը համապատասխանէր, և դիրիս (ոսկի) ելանն ու ծոպը՝ հայ արքունի զգեստուց և դրօշուց յատուկ էին, ինչպէս և հայ ազգային խաչադրօշին, ուստի շատ յարմարք նաև մեր այժմու դրօշին — կեղրոնական մեծ խաչը, վերին և ստորին թևերն հաւասար և քան խտորնակներն երկար, հին Հայոց քան օտարաց աւելի ընտանի ձևն էր, զոր կրնանք Հայկական խաչ անուանել, և զհոնական աշխարհի առջև կանգնել պանծանօք՝ յունկանիս ու յատիկանկանիս քով: Իւր արուեստական մանրամասնութիւնքն ալ օրինակութիւն են հայկական հին քանդակներէ: Խաչը, զեղեցիկ զարդ եւրոպական շատ դրօշներու, իւր հայկական ձևով այժմ ալ զեղեցկազոյն զարդը պիտի լինի մեր դրօշին, նաև ըստ տեսութեան իտալացի արուեստագիտաց՝ որ զործակցեցան ներկայիս յօրինման: — Խաչին չորս թևոց մէջ զետե-

դուած են՝ ժամանակագրական կարգաւ՝ չորս պատմական նշաններ: Նախ՝ Արշակունի եւացը, որ է Արև՝ երկու արծիւներու մէջ, յիշատակուած պատմութենէն և առնուած Տիգրանեան թագէն: Երկրորդ՝ Քրիստոսական մեկուցիւր, օրինակուած Էջմիածնի տաճարին բանդակէն, որ կ'ամփոփէ իւր մէջ փրկչական անունն ու խաչը, կամ գրչագրական Ք տառին արուեստական ձևը. և նախկին դարերուն նշանն էր այն հասարակաց դրօշին, որ ծածանեցաւ Վարդանանց ու Վահանեանց արի. բունակաց վերև: Երրորդ՝ Բագրատունեաց Արծիւր, բանդակուած Անույ կաթողիկէին վրայ, և հոս մարտուած իւր արուեստական թերութենէն: Չորրորդ՝ Ռուբինեանց Ասիծր, հանուած մեծին Լեոնի գեղեցիկ ոսկեկնքէն՝ որ կը պահուի Վատիկանի մէջ: Բոլոր այս ձևերը մանր բացատրուած են վերոյիշեալ գրութեան մէջ՝ որուն կը յղենք հետաքրքիրները:

Այսպէս կ'ունենանք մենք դրօշ մը՝ որոյ վրայ խմբուած են մեր տոհմային հին դրօշուց նշաններն իսկ. որոյ վրայ ամէն ինչ հնութեան, մեծութեան և սրբութեան դրօշմը կը կրէ: ուր համակ պատմութիւնն ու հին հայ արուեստը կը խօսին մէն մի գծին մէջ, սահմանուած ներշնչելու Հայուն իւր հարց առաքինութիւնը, գորութիւնը, հաւատքը, զօղելու անցեալը ներկային հետ գեղեցիկ միութեամբ մը: Մեր դրօշը միանգամայն կը խորհրդանշէ Հայաստանի ամբողջարիւնը. երբեակ Հայաստանները, Արշակունեաց, Բագրատունեաց, Ռուբինեանց, որոց վրայ Պատմութիւնն իրաւունք տուած է մեզ: կը խորհրդանշէ նաև քրիստոնեակիս կրօնը՝ որ բարձրացուց, բաժնեց ու պահեց մեր ցեղն օտարաց հետ խառնուելէ և կորնչելէ, և վառեց հայ նահատակներն՝ ի պաշտպանութիւն իրենց Հայրենեաց ու Սրբութեանց: Հուսկ՝ իւր նշաններով ու զոյներով կը գատուի ուրիշ ազգաց դրօշներէն, և կը զգնու յատուկ նկարագիր մը՝ քան շատերը շնորհալի: Դրօշ մը որ զուրկ է այսպիսի ձիրքերէ, որ աւանդութենէն չէ ժառանգած իւր նշանն ու խորհուրդը, այլ յանկարծակի հնարուած, չի խօսիր սրտին ու մտքին, և չի կրնար՝ ըստ մեզ՝ զարգացեալ Հայութեան զիտակից մեծարանքն ընդունիլ:

Գուցէ ծանր լինի ամենուն համար մեր բաւական բարդ և նուրբ դրօշին յորինումը: Այդ պարագային կրնայ սա հանդիսական լինել, և ունենալ՝ ուրիշ ազգերու պէս՝ իւր սովորական պարզ ձևն ալ. այս ինքն լոկ հայկական խաչով՝ ծիրանոյն վրայ: կարելի է դարձեալ թէ մին և թէ միւսը թողուլ ծոպով, երբ գէպ ի վայր կախուած են. իսկ երբ հորիզոնական ուղղուած են, շինել անծոպ՝ ուղիղ ծայրով, և կամ անկիւնաւոր ճեղղուած զոյգ տանով, որ նոյնպէս կ'երևի միջնադարեան հայ ձևերու մէջ: կարելի է մեր գծած հին նշաններէն ալ կազմել ուրոյն դրօշներ՝ գանազան ծառայութեանց համար:

Իսկ այն բազմակերպ դրօշները՝ որ հնարուեցան պատմականը շրջապատող մատախուղին մէջ, և որոց ներքև յօժարամիտ կուուցան մեր նոր նահատակները՝ Հայրենեաց փրկութեան համար, կրնան վայելչապէս հաւաքուիլ այն թանգարանին ծոցը՝ որ պիտի ամփոփէ հայ ազատութեան նուիրական նշխարները: Անոնց իրաւունքն է այս. ինչպէս պատմական նշանաց ալ իրաւունքն է փայլիլ Հայուն ծածանող դրօշին վրայ:

Հայկազնի ասոց Ազատ Գաղթ.

Այդ փրճանք Տէր բզդրոչուզ փառ
Եւ սաւաղեաց շուրջ ըզմարդիկ»:

Ու Ալիշանի կապոյտ կանաչ և կարմիր եռա-
գունեանը հայրենասիրական հազար հանգէմներ
հաւատարմօրէն հոչակեցին: — Բայց թէ քնչպէս
կամ ինչո՞ւ Ամերիկայի գաղութը՝ վերջին ամիս-
ներուս որոշման մը համեմատ՝ անտեսել Հայր
Ալիշանի վեհիմաստ և դարէ մ'իվեր սիրուած
ու սրբազործուած եռագունեանը, — այդ էս չեմ
գիտեր: — Գոյցէ՛ կապոյտի և կանաչի մերձա-
ւորութիւնը շփոթորեալմ առիթ ենթադրելով՝
ինչ որ չափաւորապէս իրաւացի իսկ է: Այդ
թերին, սակայն, կարելի էր սրբազրել՝ հետեւ-
ելով Եւրոպայի Հայոց որոնք կամբիրը կեցրու-
նագոյցին և մինչև այսօր ալ (Տես «ԱՆՔԱՆՈՒՆ»-ը
Փարիզի, 1918, թիւ 23) անով կ'ընթանան:

Այդ սրբազորութիւնը՝ գեղեցիկ է, այո՞. բայց
աւելի ևս հաւանելի պիտի չլլա՞ր համօրէն Հայոց՝
— իր Հայրենիքն ա՛յնչպի սիրող, և ինքն ալ
փոխադարձ՝ իւր հայրենիքէն արժանապէս ա՛յն-
քան սիրուած «Հայ գրականութեան շողողուն
աստղը» Հ. Ալիշանը չանտեսել, ալլ — հնարճ
մը գտնել հաւատարիմ Մալու եռագունեանի թէ՛
հանձնարել հեղինակին, և թէ բնապատում բնա-
զրին, ծիծածանին: — Այդ դիտումն ունի իմ
յօղուածս՝ որով՝ կ'առաջարկեմ հոս հետեւեալ-
ները: — Կազմել հորիզոնական

ուրբ կապոյտ, լայն՝ 10
բաց կանաչ » 20 } × 60 երկայն,
ծիրանի կարմիր » 10 }

ունենալու համար դրօշակը՝ պարզ, գեղեցիկ,
ինքնատեղի ու ծիծածանի շարակցութեանը աւելի
մերձաւոր. վասն զի ընդ մէջ կամբիրին՝ գոյու-
թիւն ունի ելմարիտի դեղնորակը, զոր՝ գայն ևս
որդգրել՝ եռագունեանի օրէնքը կը մերժէ: —
Եւ կամ՝

Կամբիրեմ՝ Ռուսահայ Պարուկեայ Տաճ-
կանայ՝ երես շատ տաճար տաճարներու Ազգային
Գրօջ մը, կոտորակային բազմապատկումովը
Ալիշանի համաչափ եռագունեանին, ձեւելով
գայն՝ քիչ շատ՝ Ամերիկեան Գիտացած Դասանգ-
ներու գրօշակին վրայ.

կապոյտ } 1 × 1,5 մեթր, հորիզոնա-
կանայ } կան կերպով ճանգա՛ կըրկ-
կարմիր } նըւած նոյն չափին մէջ:

Աս ալ՝ գրեթէ նոյնչափ գործնական է ու
գեղեցիկ, և նարտափայլ շերտերուն կրկնու-
թեամբը՝ ծիծածանին աւելի մերձաւոր երևոյթ
մը կը ստանայ, գոհացնելով միանգամայն Եւ-
րոպայի Հայոց՝ ծիրանին կեցրուցեցելու փա-
փաքը, եւ միանգամայն Ամերիկահայ եղբայրնե-
րու աչքին ալ արյոյն իսկ մտերիմ երևանալով:

Ամերիկեան աստղերուն փոխարէն, Հայ Գրօ-
շին կատարելապէս կը պատշաճի ունենալ խա-
ւիւր՝ միացած Հայաստանի երեք մասանց թու-
վը. զորս՝ ես պիտի սիրէի գեռեղի բրգան և
ընդթով, այնպէս որ անոնց տեսիլը մարդու
մտքին յիշեցնէ իսկոյն՝ Հայ եկեղեցիներու կա-
թոլիկէն, ցցուն՝ յատուկ մասը Հայ ազգային
Ճարտարապետութեան: Խաչերի՛ կրնան ըլլալ
արծարափայլ (ճերմակ), կամ՝ սուկեզօծ (դեղին):
Ու այդպէ՛ս պիտի նկատուին երեք խաչերը՝ խոր-
հրդանիշ (symbole), Հայ ԿՐԵՒՄ, ՄԱՐԿՈՍԵՍԻ
ԿՐԻՍՏԵԱՆԸ և ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆԸ: Խաչի իսկապէս
և հանրածանօթ իմաստ է ըստ աշխարհի, — ԱՅՈՒ-
ՏՈՒԹԻՒՆ, ԱՆՈՍՏՐԱՌՈՒԹԻՒՆ, ԵՂԲԱՌՈՒԹԻՒՆ, իսկ
կրօնական տեսակէտով՝ ԱՆՈՒՅՈՒՆ, ՅՈՒՆ, ՍԵՐ: Ասոնք
են վեհիմաստ ներշնչողներ՝ կապոյտ, կանաչ,
կարմիր՝ եռագունեան եռախորհուրդ պատասխան:
Թէ՛ ծիծածանը և թէ՛ խաչը խնամքներ ևս ար-
դէն. երկուքն ալ փոխազարձ յորժորշուած ըլ-
լալով «Աստուածանիշ գրօջ»:

Ու այդպէ՛ս, մեք, երկնքի աղոյին ծուէննե-
րէն կազմելով մեր գրօջը, կերպով մը յար-
գած կ'ըլլանք նաև մեր նախնեաց «աղօնագրի
ԱՆՆԱՆՈՒՄՈՒՆ»-ը.* մինչդեռ գողթան երգիչի գոռ
գալարափողը՝ զոգոցն մարգարէաբար կը ոգե-
կոչէ՛ բոցարուղի հոգին Հայաստանի, գուշակե-
լով 20 երրորդ դարէն Հայոց մարտիրոսական
անկող տազնապը, և հուօ՛կ՝ Ազգային Գրօշակի
«Յարփիասկիզբն յաղեղնաշրջան ի բնագաւառ
մարդկան գրոհի» փառապանծիկ յաղթանակով
ծածնիլը.

«Երկնքն ԵՐԿՆ, և ԵՐԿԻՐ և ծիրանի տղւ.
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն:
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանակիկ վազէր.
Դա հուր հեր ունէր. բոց ունէր մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք»:

Հ. Ալիշանի «Հայրունի» ոտանաւորները գրե-
թէ ամենքն ալ գոհարիկ բառեր ու տողեր կը
պարունակեն ծիծածանի հասցէին: Հ. Ալիշանը
սիրահար մ'է ծիծածանի՞:

«Բոցոյ հրայնոյ նըմանեալ ընդ օդս աղա-
մանտիկս,

Արփից հիւսութեանք՝ ընդ ծիծածան ձըքինս
ծովոց.»

Բայց ի՛նչ գարմանք, ո՞վ կայ որ համակրի,
չհառաչէ, չերգէ փառքն անոր:

Հ. Գ. ԱՅՏԵՆԵԱՆ

* «ԱՆՔԱՆՈՒՆ»-ը յարբերութեան մասին տե՛ս նաև
համեմատական յօդուածս Բազմակնոց 1914 էջ 368-373.
** Երկուստի բառ մը կը պակսի թէ՛ ա. և թէ՛ բ.
ուպազօրութեան մէջ. (Նոտագր Գ- էջ 7). Մ. 8.